

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐԸ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՆ-ԴՇ-19/04**

ք. Երևան

« 14 » « փետրվարի » 2019թ.


Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ **Վ.Զիլավյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**Դիլիջան» ազգային պարկ**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Ս.Աղաջանյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «**Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում**» ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 1155, միջոցառում 11005 («Դիլիջան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **136 209 200 (մեկ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր ինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված N¹-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիզ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում՝ ծրագրի ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելով՝ ղեկավարում է Կազմակերպությանը:
- 2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.



- 2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը


- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Պայմանագրի Հավելված N2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:
- 4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը տվյալ կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:



6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված N°2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
- 8.4. Կազմակերպությունը մինչև 2020 թվականի հունվարի 31-ը պետական մարմին են ներկայացնում տեղեկատվություն 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:
- 8.5. Պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ N°N°1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011007797

ՀՎՀՀ 02507198


Բնապահպանության նախարարության

գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան

(ստորագրություն)

Վ.Տ.



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ


ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 2

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900018003856

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի





ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

NN h/h	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա- ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	«Դիվիզան» ԱՊ պահպանություն	<p>Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա): Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա)</p> <p>Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում:</p> <p>Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոլոգատարակություն:</p>	<p>Պահպանության միջոցառումների անցկացում՝ ազգային պարկի աշխատակիցների կողմից տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով:</p> <p>Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ազգային պարկի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը</p> <p>Էկոլոգիական իրազեկության և էկոլոգատարակության նպատակով հարող բնակավայրերի բնակչության հետ հանդիպումների կազմակերպում:</p>	<p>Պատշաճ պահպանության ապահովում, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում, հաշվետվություններ, վերլուծություններ և բնարկումներ</p> <p>Հրդեհների կանխարգելում:</p> <p>Դիվիզան համայնքի բնակչության համար</p>	31.12.2019թ.	118 929 200

2	«Դիվիզան» ԱՊ գիտական ուսումնասիրություններ	<p>«Դիվիզան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի միջոցառումների իրականացում: Գիտական միջոցառումների հաշվետվությունների թիվը 1 (մեկ), ռեկրեացիոն միջոցառումների հաշվետվությունների թիվը 2 (երկու):</p> <p>Տարբեր ընտանիքների, ցեղերի և տեսակների բուսատեսակների ուսումնասիրություն և գիտական հենք ունեցող հերթառումների պատրաստում</p> <p>«Դիվիզան» ազգային պարկի բույսերի տարբեր կարգաբանական խմբերի ուսումնասիրություն հետազայում «Անտառային քարիքները» խորագրով գրքուկի տպագրում նպատակով</p> <p>«Կենու պոլիպի և փորձահրապարակի մատղաշների ուսումնասիրություն»</p> <p>«Դիվիզան» ազգային պարկի տարբեր կենդանատեսակների և բուսատեսակների ուսումնասիրություն</p> <p>Նոր արահետի հայտնաբերում և մշակում</p> <p>Արահետների ընթացիկ վիճակի ուսումնասիրման նպատակով պարբերական այցեր ԴԱՊ-ի արահետներով</p> <p>Միջնադրյան վանքերի և Պարզ լիճ - Գոշաձաճ արահետներում այցելությունների վերաբերյալ մոնիթորինգի իրականացում:</p>	<p>Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների ձեռք բերում, ուսումնասիրությունների իրականացում</p> <p>դիտայցերի ժամանակ տարբեր կարգաբանական խմբերի բուսատեսակների հավաքում, չորացում և հերթառումների ստեղծում: Մատյանի ստեղծում հավաքված յուրաքանչյուր բուսատեսակի վերաբերյալ տեղեկատվության գրանցման նպատակով (բարձրություն, տեղամաս, բույսի զարգացման փուլ և այլն)</p> <p>ԴԱՊ-ի տարածքին բնորոշ անտառային քարիքների՝ պտուղ-հատապտուղ, ուտելի բույսերի, դեղաբույսերի, թունավոր և ուտելի սնկատեսակների ուսումնասիրություններ և դրանց վերաբերյալ համառոտ նյութերի հավաքագրում, մշակում և տպագրություն (20 էջ):</p> <p>Կենի ծառատեսակի, ինչպես նաև 2006թվականին հիմնված փորձահրապարակի ընդհանուր վիճակի ուսումնասիրություն: Մատղաշների աճին օժանդակող միջոցառումների իրականացում, մաքրման աշխատանքներ:</p> <p>Պարբերաբար կազմակերպվող դիտայցերի ընթացքում ԴԱՊ-ի կենսաբազմազանության տեսակային կազմի, մոտավոր թվաքանակի և տարածվածության ուսումնասիրություն:</p> <p>Նախատեսվում է «Դիվիզան» ազգային պարկի տարածքում իրականացնել ուսումնասիրություններ, որի արդյունքում կմշակվի նոր արահետ: Մեկ արահետ՝ GPS տվյալներով:</p> <p>Արահետների ընթացիկ վիճակի ուսումնասիրման նպատակով նախատեսվում է իրականացնել պարբերական շրջայցեր ԴԱՊ-ի տարածքում առկա բոլոր 23 արահետներով:</p> <p>Նախատեսվում է Միջնադրյան վանքերի և Պարզ լիճ - Գոշաձաճ արահետներում, իրականացնել այցելությունների վերաբերյալ մոնիթորինգ (2 արահետ):</p>	<p>Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների վերլուծությունների առկայություն</p> <p>ԴԱՊ-ի բույսերի տեսակային կազմի վերաբերյալ դիտարկելի նյութերի առկայություն</p> <p>Այցելումներին ԴԱՊ-ի տարածքին բնորոշ անտառային քարիքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում</p> <p>Կենի ծառատեսակի վերաճի և 2006թվականին հիմնված փորձահրապարակի վերաբերյալ հստակ տեղեկատվություն</p> <p>Կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում</p> <p>Նոր արահետ</p> <p>Արահետների ընթացիկ վիճակի վերաբերյալ տեղեկատվություն</p> <p>Զրոսաշրջիկների վերաբերյալ տեղեկատվություն</p>	31.12.2019թ.	17 280 000
---	--	---	---	--	--------------	------------

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Քաղաքապետության նախարարության
խավոր քարտուղարի ծ/պ

Վ. Ջիլվալյան

(ստորագրություն)

Կ.Տ.


«Դիլիջան» հիմնական պարկ» ՊՈԱԿ-ի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» հիմնական պարկ» ՊՈԱԿ-ի

Ս. Արմաշյան

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր



Ծրագրի դասիչը՝ Միջոցառման դասիչը՝	1155 11005	Ցուցանիշներ			Տարի
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	
Միջոցառման անվանումը՝					
Նկարագրությունը՝	«Դիլիջան» ազգային պարկի պահպանության՝ պարկում գիտական ուսումնասիրությունների՝ անտառափնդեսական աշխատանքների կատարում				
Միջոցառման տեսակը՝	«Դիլիջան» ազգային պարկի տարածքում պահպանության՝ գիտական ուսումնասիրությունների՝ անտառափնդեսական աշխատանքների իրականացում				
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Ծառայությունների մատուցում Մասնագիտացված կազմակերպություններ				
Արդյունքի չափորոշիչներ					
ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի (անոշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա		33765	33765	33765	33765
Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների թիվ, հատ			1	1	2
Որսագործության դեպքերի քանակի նվազում, տոկոս					10
Ապրիլի ծառահատումների քանակի նվազում, տոկոս					8
Բնական և մարդածին աղետների կանխարգելման կարողություն, տոկոս					60
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հնգադր դրամ)		34 052.3	68 104.6	102 156.9	136 209.2